ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

16 հունվար 2015 թվական N1-Ա

## ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի և 12-րդ հոդվածի 4-րդ մասով.

Համայնքի ավագանին որոշում է`

Հաստատել Արուճ համայնքի ավագանու 2015 թվականի հունվարի 16-ի նիստի օրակարգը:

1.Արուճ համայնքի 2014 թվականի տարեկան բյուջեի կատարողականը հաստատելու մասին:

2.Արուճ համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում կատարված փոփոխությունը հաստատելու մասին:

3.Արուճ համայնքի զարգացման 2014-2017 թվականների քառամյա ծրագրով 2015 թվականին կատարվող աշխատանքների մասին:

4.Արուճ համայնքի տեղական տուրքերի և տեղական վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

5.Արուճ համայնքի ղեկավարի աշխատավարձի և աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

6.Արուճ համայնքի 2015 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին:

7.Արուճ համայնքի վարչական տարածքում գտնվող աճուրդ-վաճառքով տրված հողերի մեկնարկային գների հաստատումը և մրցույթով տրվող հողերի մեկնարկային գների հաստատումը:

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

1.Մուշեղ Ղազարյան

2.Երվանդ Մանուկյան

3.Արշակ Մանուկյան

4.Կորյուն Հովհաննիսյան

5.Գեղամ Կարապետյան

Արուճ համայնքի ղեկավար Բ.Մարտիրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

16 հունվար 2015 թվական N 2-Ա

ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2014Թ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օ րենքի 34-րդ հոդվածի 1-ին կետով, 69-րդ հոդվածի և16-րդ հոդվածի 4-րդ կետով.

Համայնքի ավագանին որոշում է

1.Հաստատել Արուճ համայնքի 2014թվականի տարեկան բյուջեի կատարման հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

1 .Մուշեղ Ղազարյան

2 .Երվանդ Մանուկյան

3.Արշակ Մանուկյան

4.Գեղամ Կարապետյան

5.Կորյուն Հովհաննիսյան

Արուճ համայնքի ղեկավար Բ.Մարտիրոսյան

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արագածոտն

մարզի Արուճ համայնքի ավագանու

2015թվականի հունվարի 16-ի թիվ 2 որոշման

Արուճ համայնքի 2014 թվականի տարեկան բյուջեի կատարման ընթացքը.

| ԲՅՈՒՋԵ | ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ |
|---|---|
| Հողի հարկ-3977,0 | 3516,2 |
| Գույքահարկ-1984,0 | 1938,6 |
| Հողի վարձավճար-1607,0 | 1456,6 |
| Այլ եկամուտ -2001,0 | 1325,3 |
| Տեղական տուրք-160,0 | 70,0 |
| Դոտացիա - 15590,0 | 15590,0 |

Արուճ համայնքի ղեկավար Բ.Մարտիրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

16 հունվար 2015 թվական N 3-Ա

## ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի >>25.12.2014 թվականի թիվ 145 դրական եզրակացությունը.

Արուճ համայնքի ավագանին որոշում է՝

1.Արուճ համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականության հանդիսացող 010-018 ծածկագրում /վկայական 2724097/գյուղատնտեսական արտադրական նշանակության հողամասից 0.068 հա հողամասը փոխադրել և դասել բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության հողերի շարքը՝ բնակելի տունը պետական գրանցում ստանալու համար:Փոփոխության պահի հետ կապված կադաստրային արժեքների տարբերության վճարում չի կատարվում ,քանի որ կադաստրային արժեքների տարբերություն չկա:

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝

Կողմ-5 Դեմ -0 Ձեռնպահ-0

1 .Մուշեղ Ղազարյան

2 .Երվանդ Մանուկյան

3.Արշակ Մանուկյան

4.Գեղամ Կարապետյան

5.Կորյուն Հովհաննիսյան

Արուճ համայնքի ղեկավար՝ Բ.Մարտիրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

16 հունվար 2015թվական N4-Ա

ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2014-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐՈՎ 2015 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետով.

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արուճ համայնքի զարգացման 2014-2017 թվականներին քառամյա ծրագրով Արուճի գյուղական համայնքում կատարվող աշխատանքները՝ համաձայն հավելվածի:

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

1.Արշակ Մանուկյան

2.Երվանդ Մանուկյան

3.Գեղամ Կարապետյան

4.Կորյուն Հովհաննիսյան

5.Մուշեղ Ղազարյան

Արուճ համայնքի ղեկավար՝ Բ.Մարտիրոսյան

ՀՀ Արագածոտնի մարզ Արուճ
համայնքի  ավագանու 2015թվականի
16 հունվար թիվ 4-Ա որոշման

2014-2017 թվականներին քառամյա ծրագրով նախատեսվում է կատարել.

1.2015 թվականին  Արուճ համայնքի գյուղամիջյան փողոցների լուսավորում՝3000,0 հազար դրամ:

2.2016 թվականին Արուճ համայնքի ոռոգման ներտնտեսային ցանցի երրորդ կարգի ջրանցքների նորոգման համար՝4000,0 հազար դրամ:

3.2017 թվականին Արուճ համայնքի <<Աղբյուրիկ>> մանկապարտեզի շենքի կապիտալ նորոգան համար՝20000,0 հազար դրամ:

Արուճ համայնքի ղեկավար՝ Թ.Մարտիրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

16 հունվար 2015 թվական N 5-Ա

## ԱՐՈՒՃ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ,10-րդ և11-րդ հոդվածների պահանջներով.

Համայնքի ավագանին որոշում է՝

Արուճի գյուղական համայնքում սահմանել տեղական տուրքերի և տեղական վճարների դրույքաչափերը՝համաձայն հավելվածի:

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝

Կողմ-5 Դեմ -0 Ձեռնպահ-0

1 .Մուշեղ Ղազարյան

2 .Երվանդ Մանուկյան

3.Արշակ Մանուկյան

4.Գեղամ Կարապետյան

5.Կորյուն Հովհաննիսյան

Արուճ համայնքի ղեկավար՝ Բ.Մարտիրոսյան

Հավելված

Արուճ համայնքի ավագանու 2015 թ.
16 հունվար N 5-Ա որոշման

# ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների/ ներառյալ` ոչ հիմնական / շինարարության /տեղադրման/ թույլատվության համար տեղական տուրք սահմանել

1.1 Մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի , այդ թվում՝ այգեգործական տների , ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող և հասարակական , և արտադրական նշանակության օբյեկտների նկատմամբ մինչև 10000 դրամ:

1.2 Ոչ հիմնական շինությունների համար՝ մինչև 20քմ և 20քմ-ից ավել ընդհանուր մակերես ունեցող տարացքների համար սահմանել 5000 դրամ :

1.3 Համայնքի վարչական սահմանում շենքերի,շինությունների , քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման համար սահմանել 5000 դրամ:

2.Համայնքի տարածքում տեղական տուրք է սահմանվում

2.1 Ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար ` հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար 1500 դրամ:

2.2 Ծխախոտի վաճառքի թույլտվության համար` հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար 1500 դրամ:

Արուճ համայնքի ղեկավար Բ.Մարտիրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

16 հունվար2015 թվական N6-Ա

## ԱՐՈՒՃ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետով,«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով և«Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ կետով.

Համայնքի ավագանին որոշում է`

1.Արուճ գյուղական համայնքի ղեկավարի աշխատավարձը սահմանել 220000 դրամ/երկու հարյուր քսան հազար /:

2.Արուճ ի գյուղապետարանի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատել ` համաձայն հավելվածի:

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝

Կողմ-5 Դեմ -0 Ձեռնպահ-0

1 .Մուշեղ Ղազարյան

2 .Երվանդ Մանուկյան

3.Արշակ Մանուկյան

4.Գեղամ Կարապետյան

5.Կորյուն Հովհաննիսյան

Արուճ համայնքի ղեկավար` Բ.Մարտիրոսյան

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզի Արուճ
գյուղական համայնքի ավագանու
2015թ հունվարի 16-ի N 6-Ա որոշման

# ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՒՃԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը -11
Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը -11

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափ |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 220000 |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 128000 |
| Համայնքային ծառայության պաշտոններ | | |
| Աշխատակազմի քարտուղար 1.2-1 | 1 | 161000 |
| Գլխավոր մասնագետ 2.3-1 | 1 | 145000 |
| Առաջատար մասնագետ 3.1-2 | 1 | 134000 |
| Առաջատար մասնագետ 3.1-3 | 1 | 134000 |
| Կուլտուրայի տան տնօրեն | 1 | 70822 |
| Գրադարանավար | 1 | 66138 |
| Պահակ/կուլ.տուն,մանկապարտեզ/ | 1 | 70822 |
| Ընդամենը /ամսեկան/ | 9 | 1129782 |
| Սպասարկող անձնակազմ/ինքնաֆինանսավորում/ | | |
| | | |
| Խմելու ջրի ներքին ցանցի սպասարկող | 2 | 179502 |
| Ընդամենը /ամսեկան/ | 11 | 1309284 |

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝
Կողմ -5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Ա.Մանուկյան

Ե.Մանուկյան

Կ.Հովհաննիսյան

Մ.Ղազարյան

Գ.Կարապետյան

Համայնքի ղեկավար՝ Ք.Մարտիրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

16 հունվար 2015 թվական N7-Ա

## ԱՐՈՒՃ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով.

Համայնքի ավագանին որոշում է`

Հաստատել Արուճ համայնքի 2015 թվականի տարեկան բյուջեն `համաձայն հավելվածի:/1-6/

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ`

Կողմ-5 Դեմ -0 Ձեռնպահ-0

1 .Մուշեղ Ղազարյան

2 .Երվանդ Մանուկյան

3.Արշակ Մանուկյան

4.Գեղամ Կարապետյան

5.Կորյուն Հովհաննիսյան

Արուճ համայնքի ղեկավար` Բ.Մարտիրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԱՐՈՒՃ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի
Արուճ համայնք ,հեռ.093-03-40-95

# ՈՐՈՇՈՒՄ

16 ՀՈՒՆՎԱՐ 2015 ԹՎԱԿԱՆԻ N 8-Ա

ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՃՈՒՐԴ - ՎԱՃԱՌՔՈՎ ՏՐՎՈՂ ՀՈՂԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՂԵԿԱՎԱՐՎԵԼՈՎ «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 16-ՐԴ ՀՈԴՎԱԾՈՎ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Ընթացիկ տարում թույլատրել համայնքի ղեկավարին համայնքային նշանակությանսեփականություն համարվող հողամասերից կազմակերպել 8,6 մլն դրամի հողամասերի օտարումներ: Համայնքի վարչական տարածքում գտնվող գյուղնշանակության հողամասերի մեկ հեկտարի աճուրդ -վաճառքի մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի 100%-ի չափով: Արտադրական նշանակության և բնակավայրի հողերի 1մ քառ . տարածքի գինը սահմանել կադաստրային արժեքի 50%-ի չափով:
Թույլատրել համայնքի ղեկավարին կազմակերպել վարելահողերի ,արոտավայրերի ,պտղատու այգիների և այլ հողերի մրցույթ՝վարելահող 120հա,արոտավայր 120հա,այլ հողեր 6 հա և պտղատուայգի 0,79 հա: Մեկնարկային գինը սահմանել զուտ եկամուտի 20%-ի չափով:

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ ՝

Կողմ -5 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Ե.ՄԱՆՈՒԿՅԱՆ

Մ.ՂԱԶԱՐՅԱՆ

Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ

Գ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արուճ համայնքի ղեկավար Ռ.Մարտիրոսյան